ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ԿԴ-1146/11018

ք. Երևան « 20 » « հունվար» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Ռ. Քասարջյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1146 «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «11018. Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) ինժեներական լաբորատորիաների խմբակների աշխատանքների կազմակերպման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **858 636 900** (ութ հարյուր հիսունութ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20 -ը:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար

նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահահարաբերությունների վրա և գործում է մինչև դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Ք. Երևան, Կառավարական 2 շենք	Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ, 318 սենյակ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011000727	Հ/Հ 2052222084281001
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ01226155
Գլխավոր քարտուղարի	Գործադիր տնօրեն՝
պարտականությունները կատարող՝	
Վ. Գասպարյան	Ր. Քասարջյան
Կ.Տ (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

Հավելված
2022թ. հունվարի 20 -ին
կնքված N ԿԴ- 1146/11018 պայմանագրի

Միջոցառումներ

Իրականացվելիք միջոցառումներ						
N	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետ	Պահանջվող գումարը (դրամ)
	10 տարեկանից սկսած երեխաների համար ինժեներական կթություն ստանալու հնարավորության ստեղծում, հմտությունների ձեռքբերում և նրանց ուղորդում դեպի ՏՀՏ ոլորտ:					
1	Ինժեներական լաբորատորիաների գործունեության կազմակերպում	Ինժեներական լաբորատորիա-խմբակների խմբակավարների վարձատրություն	Ինժեներական հակում ունեցող երեխաների բացահայտում, նրանց ներգրավվում խմբակներում, մշակված մեթոդաբանության համաձայն, համակարգչային ծրագրավորման, ռոբոտաշինության, եռաչափ մոդելավորման դասընթացների իրականացում: Խմբակների սաների մասնակցության ապահովում ցուցահանդեսներին, մրցույթներին և ճամբարներին:	2021թ.-ին 1030 խմբերի գործունեության կազմակերպում, գործունեություն՝ այդ թվում՝ 942 խմբերի գործունեություն 11 ամիս, 50 խմբերի գործունեություն 8 ամիս, 38 խմբերի գործունեություն 4 ամիս, Խմբերում աշխատանքների ամսական միջին ժամաքանակը՝ 42 դասաժամ, յուրաքանչյուր խմբում առնվազն 10 երեխաների մասնակցություն:	31.12.2022թ	763557000
2		Ռոբոտաշինության խմբակների խմբակավարների վարձատրություն	Ինժեներական հակում ունեցող երեխաների բացահայտում, նրանց ներգրավվում խմբակներում, մշակված մեթոդաբանության համաձայն, համակարգչային ծրագրավորման, դասընթացների: Խմբակների սաների մասնակցության ապահովում ցուցահանդեսներին, մրցույթներին և ճամբարներին:	2021թ.-ին՝ 15 խմբերի գործունեության կազմակերպում, այդ թվում՝ 3 խմբերի գործունեություն 11ամիս տևողությամբ, 7 խմբերի գործունեություն 10 ամիս, 5 խմբերի գործունեություն 4 ամիս տևողությամբ: Խմբերում աշխատանքների ամսական միջին ժամաքանակը՝ 31 դասաժամ, յուրաքանչյուր խմբում առնվազն 10 երեխաների մասնակցություն:	31.12.2022թ.	7699900
3		Ինժեներական լաբորատորիաներին կից ԱԹՍ խմբակների խմբավարների վարձատրություն	Ինժեներական լաբորատորիա հաճախող, առավել ընդունակ, 14-18 տարեկան երեխաների ներգրավվում, ԱԹՍ կրթական դասընթացներին, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ստացում՝ պատրաստման, տեխնիկական սպասարկման և կառավարման ուղղություններով:	2021թ.-ին 50 խմբերի գործունեության կազմակերպում, այդ թվում՝ 20 խմբերի գործունեություն՝ 11 ամիս, 12 խմբերի գործունեություն՝ 5 ամիս, 18 խմբերի գործունեություն1 ամիս տևողությամբ: Խմբերում աշխատանքների	31.12.2022թ.	37080000

				ամսական միջին ժամաքանակը՝ 42 դասաժամ, յուրաքանչյուր խմբում առնվազն 8 երեխաների մասնակցություն:		
4		Ինժեներական լաբորատորիա-ների խմբակների աշխատանքների համակարգման նպատակով մարզային (տարածքային) համակարգողնե ր ի վարձատրու-թյան իրականա-ցում	Մարզում գտնվող խմբակների աշխատանքների մշտա-դիտարկում, այցելություններ խմբակներ, տեխնիկական խորհրդատվություն և օժանդակություն, խմբակավար-ների հաշվետվությունների ընդունում և ներկայացում ԱՏԶՄ, նրանց վերապատրաստման գործընթացի կազմակերպում, խմբակների մասնակցության աշխատանքների համակարգում մրցույթներին ցուցահանդեսների և ճամբարների ընթացքում	Խմբակների աշխատանքների արդյունավետ մշտադիտարկում, 3-4 ամիսը մեկ պարբերականությամբ այցելություններ մարզի խմբակներ, խմբակների կողմից armath.am ինտերնետային կայքով սահմանված մեթոդաբանության կիրառման ապահովում, մարզի խմբակներից անցկացվող մրցույթներին և ճամբարներին մասնակցություն, մարզի մակարդակում անցկացվող համապատասխան միջոցառումների մասնակցություն: 23 համակարգողի աշխատանքներ՝ 11 ամիս, 1 համակարգողի աշխատանքներ՝ 10 ամիս ժամկետով:	31.12.2022թ.	37330000
5		Ինժեներական լաբորատորիանե ր ին կից ԱԹՍ կրթական ծրագրի խմբակների գործունեության համակարգողի վարձատրություն	Մարզերի քաղաքներում և Երևան քաղաքում ԱԹՍ կրթական աշխատանոցների ստեղծման և գործունեության համակարգում	Առնվազն ԱԹՍ կրթական 17 աշխատանոցների գործունեության ապահովում, յուրաքանչյուրում 2-3 խմբերի գործունեություն:	31.12. 2022թ.	2970000
6		«Արմոռբոտիքս 2022» Ռոբոտների 14-րդ Հայաստանի առաջնություն	Ինքնակառավարվող ռոբոտների մրցույթի անցկացում, երկու տարիքային խմբերով, 10-13 տարեկաններ և 14-17 տարեկաններ, որին կարող են մասնակցել ինչպես Արմաթ լաբորատորիաների թիմեր այնպես էլ այլ խմբակների սաներ:	Նախընտրական փուլի առնվազն 150 թիմերի մասնակցություն, երզրափակիչ փուլին առնվազն 40 թիմերի (3-4 հոգի) մասնակցություն, թիմերին մրցութային առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ մասերի տրամադրում, մրցույթից մեկ օր առաջ մրցութային վայրում ռոբոտների փորձարկումներ անելու հնարավորության ստեղծում, հեռավոր մարզերի երեխաների և ղեկավարների համար	31.12.2022թ.	10000000

				գիշերակացի և 3 անգամյա սննդի ապահովում, մրցույթի մասնակիցներին փոխադրամիջոցի և մեկանագմայ սննդի ապահովում երկու տարիքային խմբերի համար 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր զբաղեցնողներին մրցանակների տրամադրում, մրցութային դաշտի պատրաստում, սրահի ձևավորում, տեղեկատվական բաներ:		
Ընդամենը				**858 636 900**		

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011000727
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի

պարտականությունները կատարող՝

Վ. Գասպարյան

Կ.Տ (ստորագրություն)

Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ, 318 սենյակ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222084281001
ՀՎՀՀ 01226155
Գործադիր տնօրեն՝

Ր. Քասարջյան

Կ.Տ (ստորագրություն)